




ANNUAL REPORT
ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՂԵՅԱՏԵՆԵՆՅՅ ԿՈՒԿԵԼԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
ՄԵՏԵԿՈՅՆ ՊՈՍԹՈՒՄ

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH
of GREATER BOSTON
145 BRATTLE STREET
CAMBRIDGE, MASSACHUSETTS

ANNUAL PARISH ASSEMBLY, FEBRUARY 3, 1980



LET US PRAY

P R A Y E R

O JESUS, WISDOM OF THE FATHER,
GRANT US WISDOM, THAT WE MAY ALWAYS
THINK, SPEAK, AND DO THAT WHICH IS
GOOD IN THY SIGHT; SAVE US FROM
EVIL THOUGHTS, WORDS AND DEEDS.
HAVE MERCY UPON US.

AMEN

+++++

Ա Ղ Օ Ք Բ

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՀՕՐ ՅԻՍՈՒՍ, ՏՈՒՐ ՄԵՁ
ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՋԲԱՐԻՍ ԽՈՐՀԵԼ ԵՒ
ԽՕՍԵԼ ԵՒ ԳՈՐԾԵԼ ԱՌԱՋԻ ԶՈ ՅԱՄԵՆԱՅՍ
ԺԱՄ. Ի ՉԱՐ ԽՈՐՀՐԴՈՑ, Ի ԲԱՆԻՑ ԵՒ
Ի ԳՈՐԾՈՑ ՓՐԿԵԱ ՄԵՁ. ԵՒ ՈՂՈՐՄԵԱ
ԶՈ ԱՐԱՐԱԾՈՑ ԵՒ ՄԵՁ ԲԱԶՄԱՄԵՂԱՑՍ:

ԱՄԷՆ:

Ս.ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ ՄԵԾԱԳՈՅՆ ՊՈՍԹՈՆԻ

ՕՐԱԿԱՐԳ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Կիրակի, Փետրուար 3, 1980, կ.վ. ժամը 12.30-ին

- 1.- Բացման Աղօթք:
- 2.- Ընտրութիւն օրուան ղիւանի:
- 3.- Ընթերցում 1979-ի ծխական ժողովի ատենազրուածան:
- 4.- Ընտրութիւն ծխական խորհուրդի ղաղարեալ անդամներուն - 5 անձ:
- 5.- Ընտրութիւն թեմական Պատգամաւորներու - 7 անձ:
- 6.- Ընտրութիւն Հաշուեքննիչ Յանձնախումբի - 3 անձ:
- 7.- Ընտրութիւն 1981-ի Ընտրական Յանձնախումբի - 5 անձ:
- 8.- Հովիւի տարեկան զեկոյց:
- 9.- Տեղեկագիր ծխական խորհուրդի բարոյական եւ նիւթական հաշուետը-
ւութեան:
- 10.- Վաւերացում 1980-ի պիւտճէին:
- 11.- Տեղեկագիր Եկեղեցւոյս Օժանդակ Մարմիններու:
- 12.- Նոր հարցեր:
- 13.- Թեմական Պատգամաւորական ժողովին տարուելիք հարցեր:
- 14.- Փակման Աղօթք:

* * * * *

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH OF GREATER BOSTON

SUNDAY, FEBRUARY 3, 1980

AGENDA OF ASSEMBLY

1. Opening Prayer
2. Election of the day's Tivan
3. Reading of minutes of the 1979 Parish Assembly
4. Voting for Parrish Council Members (5)
5. Voting for Diocesan Delegates (7)
6. Voting for Auditing Committee (3)
7. Voting for Nominating Committee (5)
8. Pastor's Report
9. Parish Council's Activities & Financial Report
10. Approval of 1980 Budget
11. Reports of Church Auxiliary Organizations
12. New Business
13. Proposals for the Diocesan Assembly
14. Benediction

Reverend Father Mampre A. Kouzouian
Pastor and Parish Council President

Anita Hedison
Secretary, Parish Council

Helene Dořian
Chairman, Parish Council

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH OF GREATER BOSTON

ANNUAL REPORTS

<u>TABLE OF CONTENTS</u>	<u>SECTION</u>
PASTOR'S REPORT - ARMENIAN	1
PASTOR'S REPORT - ENGLISH	2
PARISH COUNCIL REPORT - ARMENIAN	3
PARISH COUNCIL REPORT - ENGLISH	4
77th ANNUAL DIOCESAN ASSEMBLY REPORT	5
CHURCH INCOME (REGULAR ACCOUNT)	6a
INCOME EXHIBITS	6b
CHURCH DISBURSEMENTS (REGULAR ACCOUNT)	6c
DISBURSEMENT EXHIBITS	6d
SPECIAL ACCOUNTS	6f
MISCELLANEOUS FUNDS	6g
PROPOSED BUDGET FOR 1980	6h
CULTURAL COMMITTEE REPORT	7
SENIOR WOMEN'S GUILD ANNUAL REPORT	A1
SENIOR WOMEN'S GUILD FINANCIAL REPORT	A2
WOMEN'S GUILD ANNUAL REPORT	P1
WOMEN'S GUILD FINANCIAL REPORT	B2
TRINITY MEN'S UNION ANNUAL REPORT	C1
TRINITY MEN'S UNION FINANCIAL REPORT	C2
CHELSEA WOMEN'S AUXILIARY ANNUAL & FINANCIAL REPORT	D1
LYNN-SALEM-PEABODY WOMEN'S AUXILIARY ANNUAL & FINANCIAL REPORT	E1
ARMENIAN SCHOOL ANNUAL & FINANCIAL REPORT	F1
CHURCH SCHOOL ANNUAL REPORT	G1
CHURCH SCHOOL FINANCIAL REPORT	G2
CHOIR ANNUAL & FINANCIAL REPORT	H1
A.C.Y.O.A. SENIORS ANNUAL & FINANCIAL REPORT	I1
A.C.Y.O.A. JUNIORS ANNUAL & FINANCIAL REPORT	J1
EREVAN CHORAL SOCIETY ANNUAL REPORT	K1
EREVAN CHORAL SOCIETY FINANCIAL REPORT	K2
TRINITY COUPLES CLUB ANNUAL REPORT	L1
TRINITY COUPLES CLUB FINANCIAL REPORT	L2
FRIENDS OF HOLY TRINITY - 1000 CLUB ANNUAL & FINANCIAL REPORT	M1

+++++

REPORT OF AUDITING COMMITTEE
OF

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH OF GREATER BOSTON

On January 9, 1980 the Auditing Committee examined the financial statements of the various organizations of the Holy Trinity Armenian Church of Greater Boston for the calendar year 1979 as follows:

Parish Council	Church School	Trinity Couples Club
Armenian School	Senior Women's Guild	Women's Guild
Trinity Men's Union	Choir	A.C.Y.O.A. Seniors
Erevan Choral Society	Chelsea Women's Auxiliary	Lynn, Salem, Peabody Women's Aux.
Friends of Holy Trinity - 1000 Club		A.C.Y.O.A. JUNIORS

In the opinion of the Committee the financial statements represent accurately a statement of income and disbursements and changes in financial position from January 1, 1979 to December 31, 1979.

Auditing Committee
George S. Alexander
Armine Der Hagopian
Gertrude Nahigian

ՀՈԳԵԽՈՐ ՀՈՎԻՒ

Տ. ՄԱՄԱՐԷ ԲՀՆՅ. ԳՈՒՋՈՒՆԵԱՆԻ

Սիրելի ծխականներ,

Փառք կուտանք Ամենակալին Աստուծոյ որ իր ողորմութեամբ եւ Եկեղեցւոյս հաւատաւոր ու նուիրեալ ծխականներու օժանդակութեամբ, արդիւնաւոր տարի մը եւս բոլորեցինք: Այն ինչ որ իրագործուեցաւ՝ կարելի չէր իրագործել, առանց ձեր համագործակցութեան եւ քաջալերանքին:

1979 տարեշրջանով բոլորած կ'ըլլանք հովուական մեր գործունէութեան երրորդ տարին Ս.Երրորդութիւն ծուխէն ներս:

Անցեալ տարուան մեր գործունէութիւնը կրնանք բաժնել հետեւեալ ձեւով. -

1.- ԿՐԾՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ.-

Ամէն կիրակի, անխափան Ս. Պատարագ մատուցուած է Եկեղեցւոյս մէջ եւ քարոզուած է հայերէն եւ անգլերէն լեզուներով: Ամառնային արձակուրդով մեր քաջակայութեան շրջանին, ինչպէս նաեւ այլ առիթներով, պատարագած կամ քարոզած է Եկեղեցւոյս Պատուակալ Հովիւ՝ Արժ. Տ. Բաբգէն Ա. Բնյ. Մագսուտեանը:

Ս. Ծննդեան եւ Ս. Զատիկի ծրագալոյցներուն ծուխիս դպրոցական մանուկներուն համար արարողութիւն կատարած եւ Ս. Հաղորդութիւն մատակարարած ենք:

Փետրուար 21-ին, Վարդանանց տօնին առթիւ միացեալ նախաօճակ կատարած ենք Ուղթըրթաունի Ս. Յակոբ Եկեղեցւոյ մէջ, իսկ Փետրուար 22-ին, միացեալ Պատարագ՝ մեր Եկեղեցւոյ մէջ:

Փետրուար 25-ին, Բուն Բարեկենդանի Պատարագէն ետք, Եկեղեցւոյս Երիտասարդաց Կազմակերպութիւնը առաջին անգամ ըլլալով Բարեկենդանի խրախճանք ունեցած է Եկեղեցւոյս սրահին մէջ:

Մարտ 7-ին, Հայաստանեայց Եկեղեցւոյ Սրբուհիներու յիշատակութեան օրուան առթիւ, Հէյվըրհիլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, Եկեղեցւոյ Տիկնանց Միութեան անդամուհիներուն հետ մասնակցած ենք Եկեղեցական արարողութեան եւ յայտագիր-ճաշին:

Մեծ Պահոց շրջանին, ամէն Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրեր, Ուղթըրթաունի Ս. Յակոբ Եկեղեցւոյ հետ միասնաբար Արեւազալի եւ Հսկումի ժամերգութիւն կատարած ենք փոխ ի փոխ երկու Եկեղեցիներու մէջ:

Աւագ Հինգշաբթի առաւօտուն, Ս. Պատարագ մատուցուած է Եկեղեցւոյս մէջ, որու ընթացքին Երէջ Տիկնանց Միութեան անդամուհիները, խմբական Ս. Հաղորդութիւն ստացած են: Աւագ Հինգշաբթի, Ոտնլուայի արարողութեան ընթացքին, Մեծագոյն Պոսթոնի շրջանէն համալսարանական հայ դասախօսներէն 12 հոգիի ոտքերը լուացինք: Աւագ Շաբթուան մնացեալ օրերուն, Հայաստանեայց Եկեղեցւոյ կարգաց-կանոնաց համաձայն ժամերգութիւն կատարեցինք:

Ապրիլ 24-ին, Նահատակաց Օրուան առթիւ, Ուղթըրթաունի Ս. Յակոբ Եկեղեցւոյ մէջ միացեալ Պատարագ մատուցինք:

Մայիս 6-ին հիւրաբար պատարագած է իւնիըն Սիթիի, Ն.Ճ., Հոգեւոր -16-
Հովիւ Արժ. Տ. Գառնիկ Քինյ. Հալլաճեան:

Մայիս 13-ին, Մայրերու Օրուան առթիւ, ընտանեկան Գոհաբանական Պա-
տարագ մատուցած ենք:

Մայիս 20-ին, իր քահանայական ձեռնադրութեան 50-ամեակին առթիւ,
Եկեղեցւոյս մէջ պատարագած-քարոզած է Ամերիկահայոց նախկին Առաջնորդ՝
Գերշ. Տ. Տիրան Արքեպիսկոպոս Ներսոյեան:

Մայիս 24-ին, Համբարձման տօնին առթիւ, Ս. Պատարագ մատուց: ւած է
եւ Տիկնանց Միութեան անդամները խմբական Հաղորդութիւն ստացա՞ են: Յա-
ւարտ Ս. Պատարագի տեղի ունեցած է Համբարձման Վիճակ եւ Մայրերու Օրուան
տօնակատարութիւն:

Սեպտեմբեր 9-ին, Լին-Սէյլըմ-Փիպատիի մէջ մատուցած ենք Ս. Պատարագ,
այդ շրջանի մերազն ժողովուրդին համար:

Սեպտեմբեր 30-ին, Եկեղեցւոյս մէջ քարոզած է Տիրան Արքեպիսկոպոս
Ներսոյեան:

Հոկտեմբեր 7-ին, փոխանակութեամբ՝ Եկեղեցւոյս մէջ պատարագած է
մեր նախկին Հոգեւոր Հովիւը՝ Հոգշ. Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Կիզիրեան, իսկ
մենք՝ Ուստրրի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ մէջ:

Ամերիկեան Գոհաբանութեան տօնին առիթով, նոյեմբեր 18-ին, Ընտա-
նեկան Գոհաբանական Պատարագ մատուցած ենք Եկեղեցւոյս մէջ: Այս առթիւ,
Գէյմպրիժի Եպիսկոպոսականաց Աստուածաբանական Վարժարանի Տեսուչ Տոքթ.
Հարվի Հ. Կաթրի Կրտսեր քարոզած է: Պատարագէն վերջ տեղի ունեցած է
Դպրաց Դասի ընտանեկան ճաշկերոյթը:

Դեկտեմբեր 23-ին, Ամերիկեան Քրիստոսի տօնին առիթով, ունեցած
ենք ընտանեկան պաշտամունք եւ տօնախմբած ենք ՝Մանկան Միջազգային
Տարին՝: Այս առթիւ, նիւ Եորքէն, Միացեալ Ազգերու Կազմակերպութեան
մօտ Վատիկանի ներկայացուցիչը՝ Հայր Էթթօրէ Տի ֆիլիքքօ քարոզած է
Եկեղեցւոյս մէջ, վերոյիշեալ նիւթին շուրջ:

Սեպտեմբերէն սկսեալ, ամէն Կիրակի, Կիրակնօրեայ Վարժարանի դասա-
րաններէն մին խմբական Հաղորդութիւն կ'ստանայ:

Ուրախ եմ ըսելու որ այս տարի Եկեղեցւոյս Կիրակնօրեայ պաշտա-
մունքներուն մասնակցողներուն թիւը զգալիօրէն աւելցած է: Կիրակնօրեայ
Ս. Պատարագին մասնակցելնիս կարելոր է մեր հոգեւոր զարթօնքին եւ
սնունդին համար:

Այս առթիւ կը գնահատենք Հոգշ. Տ. Օշական Վրդ. Մինասեանի տարած
աշխատանքը, Դպրաց Դասի անդամները շատցնելու եւ զանոնք մարգելուն
համար: Կը գնահատենք նաեւ Լեւոն Սարկաւազ Թէրզեանի նուիրումը: Կը
գնահատենք նաեւ Ս. Սեղանի սպասարկուներուն եւ Դպրաց Դասի անդամներուն
նուիրեալ ծառայութիւնը:

2. - ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՔ. -

Տարւոյս ընթացքին հետեւեալ խորհուրդները մատակարարուած եւ ծիսա-
կատարութիւնները կատարուած են Եկեղեցւոյս մէջ. -

Ա. - Մկրտութիւնք	20
Բ. - Պսակ	14
Գ. - Թաղում	34
Դ. - Նշանօրհնութիւն	2

13 տարբեր առիթներով ամուսնական խորհրդատուութիւններ ունեցած ենք ամուսնանալիք զոյգերու հետ: Պսակի արարողութեան եւս ունեցած ենք հարսնեւորներուն հետ, որպէս զի Ս. Պսակի խորհուրդը ըլլայ կանոնաւոր եւ վայելուչ կերպով:

3.- ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.-

Տարւոյս ընթացքին 329 հովուական այցելութիւններ տուած ենք մեր ծխականներուն: Ասոնց մէջ կ'իյնան տուներ, հիւանդանոցներ, աշխատանոցներ, տարէցներու հանգստեան տուներ, մեռելատուներ եւ զերեզմանատուներ: Ս. ծնունդին եւ Զատիկին կատարած ենք նաեւ հինգ տնօրհնէք:

4.- ԽՈՐՀՐԴԱՏՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՐ.-

Հոգեւոր Հովիւը միշտ տրամադրելի է խորհրդատուութեանց համար: Խորհրդատուութեան պահեր ունեցած ենք ամուսնանալիք զոյգերու հետ, մկրտուելիք երախաներու ծնողներու եւ կնքահայրերու հետ, սուգի մէջ եղողներու եւ ընտանեկան կան անձնական դժուարութիւններ ունեցողներու հետ:

Խորհրդատուութեան այս պահերը ունեցած են իրենց բարիքը:

5.- ԺՈՂՈՎՆԵՐ.-

Տարւոյս ընթացքին, նախագահած եւ մասնակցած ենք եկեղեցապատկան 12 կազմակերպութեանց, դիւաններու, վարչութեանց, ատենապետներու, մասնաւոր յանձնախումբերու եւ ձեռնարկներու 319 ժողովներուն:

Ապրիլ 1-ին, նախագահած ենք մասնաւոր ծխական Անդամական ժողովին, քննարկելու տարեկան թեմական Պատգամաւորական ժողովին տարուելիք հարցերը:

Հոկտեմբեր 30-ին, եկեղեցապատկան կազմակերպութեանց ատենապետներու ժողով մը ունեցանք: Երկու առիթներով միացեալ ժողով գումարեցինք Ս. Յակոբ եկեղեցւոյ ծխական խորհուրդին հետ: Վեց առիթներով հանդիպում ունեցանք Լիբանանահայութեան աղէտեալներու օգնութեան Յանձնախումբին հետ: Թեմիս նախկին Առաջնորդներէն՝ Գերշ. Տ. Տիրան Արքեպիսկոպոս ներսոյեանի քահանայական ձեռնադրութեան Յոբելինական Յանձնախումբին հետ ունեցանք 4 ժողովներ: Ապրիլեան նահատակաց 65-ամեակին առթիւ, առաջադրուած Յուշարձանի կառուցման Յանձնախումբին հետ ունեցած ենք 4 ժողովներ: Դարձեալ նահատակաց 65-ամեակի առթիւ, կազմած ենք Յանձնախումբ մը որ յառաջիկայ Ապրիլ 19-ին ցեղասպանութեան շուրջ Սիմբոզիում մը կազմակերպած է ծանօթ դասախօսներու մասնակցութեամբ: Սոյն յանձնախումբին հետ եւս ունեցած ենք 6 ժողովներ:

Վերոյիշեալներէն զատ մասնակցած ենք նաեւ թեմական խորհուրդի 13 ժողովներուն, ինչպէս նաեւ Հոգեւորականաց տարեկան եւ ամսական շրջանային խորհրդակցական ժողովներուն, նաեւ տարեկան թեմական Պատգամաւորական ժողովին:

Այս տարի կրթական երկու նոր ծրագիրներ ձեռնարկեցինք ծուխէս ներս: Ա.- Սեպտեմբերէն սկսեալ, ամէն շորեքշաբթի գիշեր, Աստուածաշունչի սերտողութեան պահ ունինք, Կիրակնօրեայ Վարժարանի տեսուչ՝ ճէյմս Մակարեանի ղեկավարութեան տակ:

Բ.- Կիրակի առաւօտներ, ժամը 10.30-էն 11.15-ը երէցներու քրիստոնէական դաստիարակութեան պահ սկսանք անցեալ Հոկտեմբերին, զանազան անձներու ղեկավարութեան տակ:

Ուրախ ենք որ Սեպտեմբերէն սկսեալ, ճէյմս Մակարեան, Աստուածաբանական ուսման հետեւող երիտասարդ մը, Կիրակնօրեայ Վարժարանի տեսուչ եւ երիտասարդաց վարիչ նշանակուեցաւ մեր ծուխէն ներս:

Հինգ տարբեր առիթներով այցելած եւ խօսած եմ Կիրակնօրեայ Վարժարանի մեր սաներուն: Շաբաթօրեայ Հայ Վարժարանի դասաւանդութեանց եւս ներկայ եղած եմ:

Եկեղեցապատկան կամ այլ կազմակերպութեանց ժողովներուն խօսած եմ զանազան նիւթերու շուրջ: Եկեղեցւոյս ամսաթերթին՝ ``Տաճար``-ի միջոցաւ եւս կատարած ենք դաստիարակչական աշխատանք:

Տարւոյս ընթացքին ``Թաֆթս`` համալսարանէն 12 աշակերտներ իրենց ուսուցչին հետ այցելեցին Եկեղեցիս, այս առթիւ խօսեցանք իրենց Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութեան շուրջ:

Մայիս 18-ին, Տիրան Արքեպիսկոպոս ներսոյեան, դասախօսութիւն մը տուաւ մեր սրահին մէջ:

Մշակութային ամսուան առթիւ, Եկեղեցւոյս Մշակութային Յանձնախումբը, ներկայացուց շարք մը ցուցահանդէսներ՝ հայկական հնութեանց, նկարներու եւ լուսապատկերներու: Նոյեմբերին, նոյն Յանձնախումբը ներկայացուց ժորժ Մկրտիչեանի համերգը Հարվըտ Համալսարանի մէջ: Դեկտեմբեր 16-ին, երրորդ տարին ըլլալով, ծննդեան համերգ մը տեղի ունեցաւ Եկեղեցւոյս մէջ, Եկեղեցւոյս ``Երեւան Երգչախումբ``-ի կատարմամբ եւ Հոգշ. Տ. Օշական Վրդ. Մինասեանի ղեկավարութեամբ: Մեծապէս կը գնահատենք Հայր Օշականի նուիրումը եւ աշխատանքը:

7.- ՀԱՆՐԱՅԻՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆ.- ``ԲԱՊԼԻՔ ՌԻԼԵՅՇԸՆՁ``.-

Եկեղեցւոյս նուիրեալ ծխականներէն՝ Պարպըրա Թէլլաւեան, կամաւորաբար եւ նուիրումով փարած է սոյն գործին: Ան, մեր առաջնորդութեամբ, Եկեղեցւոյս ձեռնարկներուն եւ յայտագիրներուն մասին, կանոնաւոր լրատուութիւն կը դրկէ հայ թէ օտար թերթերուն, ծայնասփիւռի եւ հեռուստատեսի կայաններուն եւ զանազան հաստատութեանց:

Տիկին Թէլլաւեանի կարգադրութեամբ, անցեալ Յունուար 7-ին, կէս ժամ տեւող, ծննդեան յայտագիր մը գործադրեցինք եւ հարցազրոյց մը ունեցանք հեռուստատեսի Ալիք 5-ի վրայ: Սեպտեմբեր 11-ին, հեռուստատեսի Ալիք 4-ի վրայ, 15 վայրկեան տեւող հարցազրոյց մը ունեցանք Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Ս.Խաչի տօնին շուրջ: Հոկտեմբեր 11-ին, 10 վայրկեան տեւող հարցազրոյց մը ունեցանք Ալիք 4-ի վրայ, Հայ Մշակոյթի ամսուան առթիւ:

Այս առթիւ հրապարակաւ կը գնահատենք Պարպըրա Թէլլաւեանի նուիրումը եւ պատրաստակամ ոգին:

8.- ՄԱՍՆԱԽՈՐ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ.-

Ա.- Տարւոյս Ապրիլ 28-29-ին, Ս.Երրորդութիւն եւ Ս.Յակոբ Եկեղեցիներու Տիկնանց Միութեանց նախաձեռնութեամբ, ցուցադրուեցաւ շայկական Տարագներ` : Երկու օրերուն ալ սրահը լի էր հետաքրքիր ազգայիններով: Մեծապէս գնահատելի է Տիկիններու տարած աշխատանքը:

Բ.- Մայիս 20-ին, դարձեալ երկու Եկեղեցիներու նախաձեռնութեամբ, տօնուեցաւ Ամերիկահայոց նախկին Առաջնորդ` Գերշ. Տ. Տիրան Արքեպիսկոպոս ներսոյեանի քահանայական ձեռնադրութեան 50-ամեակը: Առաւօտուն Սրբազան Հայրը հանդիսաւոր Ս.Պատարագ մատուցանեց եւ քարոզեց Եկեղեցւոյս մէջ: Երեկոյեան, Մշակութային մեր Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ մեծ ճաշկերոյթ մը ի պատիւ Սրբազան Հօր: Սրահը լեցուն էր հայ հոգեւորականներով եւ մերազն ժողովուրդով, որոնք եկած էին իրենց յարգանքը մատուցանելու մեր սիրելի նախկին Առաջնորդ Սրբազան Հօր:

Գ.- Դեկտեմբեր 9-ին, տօնախմբեցինք, Եկեղեցւոյս Պատուակալ Հոգեւոր Հովիւ` Արժ. Տ. Բաբգէն Ա. Քհնյ. Մագսուտեանի քահանայական ձեռնադրութեան 30-ամեակը: Այս առթիւ Տ. Բաբգէն Հայրը հանդիսաւոր Ս.Պատարագ մատոյց եւ քարոզեց Եկեղեցւոյս մէջ: Յաւարտ Ս.Պատարագի, տեղի ունեցաւ յարգանքի ցոյց մը եւ ընդունելութիւն մը ի պատիւ Տէր Հօր: Աւելի քան 300 բարեկամներ եւ ծխականներ ներկայ էին իրենց սէրը յայտնելու եւ յարգանքը մատուցանելու մէկու մը` որ աւելի քան 25 տարիներ իբրեւ հոգեւոր հովիւ` ծառայած է Մեծագոյն Պոսթոնի Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ ժողովուրդին:

9.- ԳՐԱՍԵՆԵԿԱՅԻՆ ԺԱՄ.-

Պահած ենք կանոնաւոր գրասենեկային ժամեր: Առաւօտեան ժամը 9.00էն Կ.Վ. 4.00-ը: Ըստ նախորդ տարիներու` ընթացք տրուած են կանոնաւոր թղթակցութեանց եւ պահուած են արձանագրութեանց տոմարներ: Հոգեւոր Հովիւէն գատ, Եկեղեցւոյս Պատուակալ Հովիւ` Արժ.Տ.Բաբգէն Ա.Քհնյ.Մագսուտեան եւ քարտուղարուհի Տիկ.Բոգ Մէմիշեան կ`աշխատին գրասենեակային աշխատանք կատարելու: Տիրացու Պետրոս Առաքելեան եւս կ`օգնէ մեզի կանոնաւորապէս: Մեր ծխականներուն մէջ եւս կան կամաւորներ, որոնք սիրալոյսով կ`օժանդակեն մեզի երբ պէտք զգանք իրենց օգնութեան: Շնորհակալութիւն բոլոր կամաւոր աշխատողներուն:

Այս առթիւ Տ. Բաբգէն Հօր եւ իմ կողմէս մեր գնահատանքը կը յայտնենք քարտուղարուհի Տիկ. Բոգ Մէմիշեանին` իր նուիրեալ ծառայութեան համար:

10.- ԳՆԱՀԱՏԱՆՔ.-

Ծխական Անդամական այս ժողովին հրապարակաւ մեր անվերապահ գնահատանքն ու շնորհակալութիւնը կը յայտնենք Եկեղեցւոյս Պատուակալ Հովիւ` Արժ. Տ. Բաբգէն Ա. Քհնյ. Մագսուտեանին` իր սիրալիր աջակցութեան եւ օժանդակութեան համար: Շնորհակալութիւն նաեւ Հոգշ. Տ. Օշական Վրդ. Մինասեանին` իր աջակցութեան համար:

Կը գնահատենք նաեւ ծխական խորհուրդի անդամներուն նուիրուածութիւնը եւ ծառայութիւնը, մասնաւորապէս ատենապետուհի Տիկ. Հելիյն Տօրեանի նուիրեալ ծառայութիւնը, ինչպէս նաեւ մեր կազմակերպութեանց դիւաններուն եւ անդամներուն եկեղեցաշէն աշխատանքը: Գնահատանքի արժանի են նաեւ Ս.Սեղանի սպասարկուներն ու Դպրաց Դասի անդամները:

Կ'աղօթենք որ Աստուած օրհնէ եւ զօրացնէ մեզ բոլորս, իր կամքին համաձայն բեղմնաւորելու համար իր այս անդաստանը:

Աղօթարար

ՄԱՄԱՐԷ ԶԶՆՅ. ԳՈՒԶՈՒԵԱՆ

Հոգեւոր Հովիւ

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH
PASTOR'S ANNUAL REPORT
FOR 1979
REVEREND FATHER MAMPRE KOUZOUIAN

Dear Parishioners:

This is my third Annual Report that I am submitting to His Eminence the Primate, and to our beloved parishioners. Whatever we accomplished during the year it is with the grace of Almighty God to whom we give praise and thanks for the Divine guidance and to the parishioners of the Holy Trinity Church for their dedication and cooperation. Needless to say, without your understanding, your prayers and cooperation, we could not have accomplished what we feel was a year of blessings and accomplishments. I would like to categorize my report in the following manner:

I. Church Services

The first task of a priest is to conduct Church Services, to administer the sacraments, and to preach the word of the Lord. According to the tradition of our Church, I have conducted Church Services every Sunday and preached in both the Armenian and English languages. Special Church Services were also conducted on high holidays that coincided during the week. I am glad that since September one of our Sunday School classes receives Holy Communion every Sunday. I am also happy to observe that during the past year more and more parishioners attended Church Services and participated in the Divine Liturgy. Attending the Divine Liturgy is essential for our Christian growth; it is here that we receive our spiritual nourishment and strength. I am also pleased to inform you that our Church Choir, under the leadership of Very Rev. Father Oshagan Minassian, has increased in membership and in "performances". I would also like to commend the devotion of our Altar Servers who faithfully participate in Church Services every Sunday. Once a week, I conducted rehearsals with our stoll bearer, Greg Krikorian, teaching him the chanting of gospel readings.

Deacon Levon Terzian continues his services to our Church as the elder deacon by participating at the Sunday morning services. I am grateful to the Pastor Emeritus, Father Papken Maksoudian, who assisted me on Sunday mornings and conducted Church Services whenever needed.

On Christmas and Easter Eves I conducted Church Services and administered Holy Communion to the children of our community. On February 25th, the Feast of Great Paregentan, according to ancient tradition of our people, our ACYOA Jrs. celebrated "Mardi Gras" following the Church Services on that day. On March 7th, the Women's Guilds of the five Churches in our area, jointly conducted Church Services at St. Gregory Armenian Church of Haverhill celebrating the Women Saints of the Armenian Church.

During Lent, every Wednesday we conducted Sunrise Service and on Friday evenings we jointly conducted the Peace and Rest Services with St. James. On Holy Thursday the members of the Senior Ladies Guild attended Church Services and received Holy Communion as a group prior to their monthly luncheon meeting. On that day in the evening during the Washing of the Feet of the Disciples Service, I washed the feet of twelve Armenian educators from different universities and colleges around us. At noon, on Holy Friday, I conducted short services in English for the youth of our parish. The members of the ACYOA Jrs. conducted the reading of the scriptures.

On April 24th, on the Martyr's Day of our people, the Divine Liturgy was jointly conducted at St. James Church. On Sunday, May 6th, Father Carnig Hallajian of the Holy Cross Church of New Jersey was our guest celebrant. On May 13th, on the occasion of Mothers' Day, a Family Service was conducted in our Church having the entire congregation participate in the Divine Liturgy. On the Fiftieth Anniversary of his consecration to the Holy Orders of Priesthood, the former Primate of our Diocese, Archbishop Tiran Nersoyan, celebrated the Divine Liturgy and delivered the sermon in our Church on May 20th. On May 24th, on the Feast of the Ascension of our Lord, the members of the Sr. Ladies Guild received Holy Communion. On September 9th, I conducted Church Services at St. Peter's Episcopal Church for the Armenian community of Lynn-Salem Peabody. On September 30th, Archbishop Tiran Nersoyan delivered the sermon in our Church. On October 7th on an exchange basis, the former pastor of our Church, Very Rev. Father Yeghishe Gizirian, celebrated the Divine Liturgy in our Church while I celebrated in Worcester. On November 18th, a Thanksgiving Family Service was conducted in our Church having as guest preacher, the Dean of the Episcopal Divinity School in Cambridge, the Rev. Dr. Harvey H. Guthrie, Jr. On December 23d, a Christmas Family Service was conducted in our Church at which time we observed "the National Year of the Child." On this occasion our guest preacher was from the United Nations, Monsignor Ettore DiFilippo, Counsellor of the Vatican to the United Nations.

II. Sacraments and Services

During the past year the following sacraments and services were conducted in our Church:

Baptisms 20 Weddings 14 Funerals 34 Engagements 2

I provided premarital counselling sessions on thirteen different occasions to those young people who were preparing for marriage. Counselling sessions were also provided prior to baptisms whenever there was the need and during and after funeral services to the bereaved families.

III. PASTORAL VISITATIONS

During the year I have made 329 pastoral visitations to homes, hospitals, offices, nursing homes, etc. During the Christmas and Easter seasons, I have also blessed the homes of parishioners who had requested this service. These visitations gave me the opportunity to be with my flock and discuss with them church and personal matters.

IV. Counselling Services

The pastor's office was made available to our parishioners who were in need of his counselling. On 24 different occasions, counselling sessions were held with individuals who had either personal or family problems.

V. Meetings

Again during the past year, I have presided, conducted or have taken an active part in 349 meetings in our parish. These included meetings with the parish council and twelve Church affiliated organizations. These also include meetings with the Tivans, chairmen or committees. I feel that these meetings are important for the vitality of our organizational life.

On April 1, I presided at our Special Assembly which was called prior to the Annual Diocesan Assembly. On October 30th, we had a meeting with all the chairmen of our Church organizations. Twice we had joint meetings with the parish council of our Church and St. James.

To help the needy Armenians of Lebanon, we formed a Special Fund Raising Committee which met six times. I conducted four meetings with a Jubilee Committee celebrating 50th Anniversary of our former Primate Archbishop Tiran Nersoyan.

In order to appropriately commemorate the 65th Anniversary of the Turkish genocide of the Armenian people, I formed a committee of academicians to conduct a Symposium on Genocide during the week of April 24th, 1980. This committee met six times during the past year. I also met four times with the Memorial Committee having in mind to propose a structural memorial commemorating the 65th Anniversary of the Genocide of our people.

From May 1-6, I participated in the Annual Clergymen's Conference and Diocesan Assembly at St. Vartanantz Church of Chelmsford. On seven occasions I participated in the regional conferences of the Armenian clergy of New England.

As a member of the Diocesan Council, I participated at 13 Diocesan Council meetings.

VI. Educational

This year we embarked on two different educational programs in our parish. Both of them were new for our community.

Since September, under the guidance of our Church School Superintendent, James Magarian, we have started Bible Seminars which take place on Wednesday evenings. From October to December we started an Adult Christian Education Seminar on Sunday mornings from 10:30-11:15 conducted by different individuals.

On five occasions I went to the Church School to either conduct the Assembly and talk to the students or I taught the graduating class. I have also visited the Saturday morning Armenian School and the classes. During the year I have also taken part and talked to different Church organizations.

During the year twelve students from Tufts University visited our Church with their professor and I spoke to them about the history of the Armenian Church. On March 21, at St. Vartanantz Church of Chelmsford, I spoke about the meaning of Lent. On May 18, Archbishop Nersoyan gave a talk in our Cultural Hall. On the occasion of Father's Day, on June 12, I spoke to the Daughters of Vartan in our Cultural Center. On October 2, I spoke to the Knights of Vartan about Armenian Culture. During our cultural month, the Cultural Committee had different exhibits during the weekends. On Nov. 18, under the auspices of our parish, our Cultural Committee presented George Mgrdichian at the Sanders Theatre. On October 28, I spoke to the Compatriotic Organization of Gurun. On Dec. 4 I spoke to the Knights of Vartan about Christmas. On Dec. 16 the Erevan Chorale Society of our Church presented its annual Christmas Concert in our Church under the direction of Very Rev. Father Oshagan Minassian.

I am glad that our Church has become the Cultural Center of the New England Armenian Community. Armenians from all over New England come to visit or participate in our cultural affairs.

On three different occasions, I conducted our Church Services or was interviewed on television. I am grateful to Barbara Tellalian who handles public relations work in our parish and makes the necessary arrangements for these TV programs. Mrs. Tellalian also writes the press releases for our cultural programs and Church Affairs. On January 7 we had a 30-minute program on Chanel 5 where I conducted the Blessing of the Water Service with the participation of the clergy from the New England area and our Choir. On Sept. 11 I was interviewed for 15 minutes on Chanel 4 where I spoke about the Armenian Church and the Feast of the Exaltation of the Holy Cross. On Oct. 11, on Chanel 4, I was interviewed about the Cultural Heritage of the Armenian People.

I would like to express my profound gratitude to the Chairman of the Cultural Committee, Donald and Barbara Tellalian and to their co-workers for the enthusiastic work they have done and for presenting similar cultural programs in our parish. We have also utilized our monthly church publication, "Dajar", to give information about the Armenian Church and her teachings and make it one of the best Church papers in our Diocese.

Since September, James Magarian, a student at the Theological School of B.U., has been the superintendent of our Church School and youth director in our parish. I urge our community to cooperate with James and encourage his efforts to serve our community and our children.

VII. Church Office

The pastor together with the pastor emeritus, Father Papken Maksoudian and the Church secretary Rose Mamishian, take care of the office work. The Church office opens at 9:00 a.m. to 4:00 p.m. However, the pastor is available to take care of the needs of the Church at all times.

Deacon Peter Arakelian and other parishioners volunteer their time to help us in our office work. Both Father Papken and I publicly express our deep appreciation to Mrs. Rose Mamishian, our devoted Church secretary, for her dedication. We also wish to express our appreciation to Deacon Peter Arakelian and to all our volunteers.

VIII. Special Events

A. On April 28-29 the Armenian Heritage, a collection of Armenian costumes from Detroit, was exhibited in our area, jointly sponsored by the Ladies Guilds of Holy Trinity and St. James Churches. This exhibition was a credit to those who had prepared and to those who had exhibited it in our area. We are grateful to the untiring efforts of the members of our two Ladies Guilds.

B. On May 20, on the occasion of the 50th Anniversary of the Ordination to the Holy Orders of Priesthood of the former Primate of our Diocese, Archbishop Tiran Nersoyan, a joint Jubilee Banquet was held with St. James Church honoring our former beloved Primate. Our Cultural Center was filled to capacity for this affair.

C. On Dec. 9 we celebrated the 30th Anniversary of the Ordination to the Priesthood of our pastor emeritus, Father Papken Maksoudian. On this occasion, Father Papken celebrated the Divine Liturgy and delivered the sermon. Following the Church Services, a program/reception was held in our Cultural Center. Over 300 well-wishers, former parishioners and friends came to pay their respects to Father Maksoudian.

IX. Appreciation

As your pastor, I would like to take this opportunity of publicly expressing my deep appreciation to the members of the Parish Council and its Chairman, Helene Dorian, for their dedication, and to the Diocesan Delegates, the Chairmen and members of each church-affiliated organization and to the members of the different committees within our community.

I would also like to express my appreciation to all those who serve in our Church on Sunday mornings during the Divine Liturgy.

Last but not least, my profound gratitude to the pastor emeritus and my brother in Christ, Father Papken Maksoudian, for his help in many ways, in my ministry to our Church, and likewise to Very Rev. Father Oshagan Minassian for his help and cooperation. May God give us the strength and wisdom for all to work together for His Glory.

Reverend Father Mampre A. Kouzouian
Pastor

Ստորեւ կը ներկայացնենք ծխական խորհուրդիս 1979 տարեշրջանի գործունէութեան տեղեկագիրը.-

1.- ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՍ ԿԱԶՄԸ.-

Տ. Մամբրէ Բհնյ. Գուգուեան, Նախագահ
 Հելիյն Տօրեան, Ատենապետուհի
 Տանըլտ ճ. Թէլլալեան, Փոխ-Ատենապետ
 ժորժ Տ. Յակոբեան, Դանձապահ
 ժողէֆ Յարուլթիւնեան, Դանձապահի Օգնական
 Անիթա Հետիսըն, Ատենադպրուհի
 Զարլս Նահապետեան, Փոխ-Ատենադպիր
 Տքթ. Գօլ Զ. Պարսամ, Խորհրդական
 ժան Պչաճեան, Խորհրդական
 Բոզ Մինասեան, Խորհրդական
 Իւժին Ռաֆայէլեան, Խորհրդական
 Էտնա Թաշճեան, Խորհրդական

Հետեւեալ անձերը երկու տարուան շրջանի համար ընտրուած էին ծխական խորհուրդի անդամ.-

ժան Պչաճեան, ժորժ Տ. Յակոբեան, Հելիյն Տօրեան, Արթըր Մարանեան
 Երէց, Իւժին Ռաֆայէլեան եւ Էտնա Թաշճեան:

Տարուան ընթացքին անձնական պատճառներով կազմէս հրաժարեցաւ Արթըր Մարանեան, որու շրջանը պիտի աւարտէ Բոզ Մինասեան, իբրեւ անձնափոխանորդ:

2.- ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԸ ՀԵՏԵԻՆԱԼՆԵՐՆ ԵՆ.-

Արժ. Տ. Մամբրէ Բհնյ. Գուգուեան, Հոգեւոր Հովիւ
 Արժ. Տ. Բաբգէն Ա. Բհնյ. Մազուտեան, Պատուակալ Հովիւ
 Հոգշ. Տ. Օշական Վրդ. Մինասեան, Դպրապետ
 Տիկ. Բոզ Մէմիշեան, Քարտուղարուհի
 Տիկ. Հէլըն Մուրատճեան, Երգեհոնահար
 Լեւոն Թէրզեան, Սարկաւազ
 Ճէյմս Մակարեան, Կիրակնօրեայ Վարժարանի Տեսուչ եւ Երիտասարդաց
 ժողէֆ Աշճեան, Շէնքերու Խնամատար Վարիչ
 ժան Սիգուլլա, Շէնքերու մաքրութեան մասնակի ժամերով հոգատար
 ժողէֆ Քաթողա, Հոգատարի օգնական՝ մասնակի ժամերով

3.- ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ.-

Եկեղեցասէր Երէց Տիկնանց Միուլթիւն
 Եկեղեցասէր Տիկնանց Միուլթիւն
 Զըլսիի Եկեղեցասէր Տիկնանց Միուլթիւն
 Լին-Սէյլըմ-Փիպատիի Եկեղեցասէր Տիկնանց Միուլթիւն

Արանց Միուլթիւն

Դպրաց Դաս

Կիրակնօրեայ Դպրոց

Հայ Դպրոց

Հայ Եկեղեցասէր Երիտասարդաց Երէց եւ Կրտսեր Կազմակերպութիւններ
Ամուսնացեալ Երիտասարդ Ջոյգերու Միուլթիւն
Երեւան Երգչախումբ

4.- ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԽՈՐՆԵՐ.-

Ռիչըրտ Կիւլիսսեան

Ճան Ս. Տէվէճեան

Արչի Գ. Խոլլիկեան

Ճան Սուրսուրեան

Օիթըր Թալանեան

Տիրան Ծաղիկեան

5.- ՀԻՒՐԱՄԵԾԱՐՈՒԹԻՒՆ.-

Եկեղեցական արարողութեանց աւարտին ծխականներու մէկտեղումը հիւրամեծարութեան ժամուն, հետզհետէ աւելի ժողովրդականութիւն կը գտնէ: Այդ պահը առիթ կու տայ ծխականներու իրարու հետ ընկերային ժամանց ունենալու: Իւրաքանչիւր կազմակերպութիւն տարին ամիս մը կը ստանձնէ հիւրամեծարութիւնը:

6.- ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎՆԵՐԸ.-

Տասնըհինգ օրը անգամ մը ծխական խորհուրդի ժողով տեղի կ'ունենայ կանոնաւոր կերպով: Ժողովներ ունեցած ենք եկեղեցապատկան կազմակերպութեանց ատենապետներուն հետ, ինչպէս նաեւ եկեղեցւոյ նախկին ծխական խորհուրդներու անդամներուն եւ երեսփոխաններուն հետ: Ծխական խորհուրդս ժողով գումարած է Մայիս 31-ին, նաեւ Ուոթըթաունի Ս. Յակոբ Եկեղեցւոյ ծխական խորհուրդին հետ, մեր երկու եկեղեցիները հետաքրքրող նիւթերու շուրջ:

7.- ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ.-

Թեմիս 77-րդ Թեմական Պատգամաւորական ժողովը գումարուեցաւ Մայիս 3, 4 եւ 5 թուականներուն Չէլմսֆըրտ, Մէսէչուսէցի Սրբոց Վարդանանց Եկեղեցւոյ մէջ: Եկեղեցւոյս կողմէ մասնակցեցան Հոգեւոր Հովիւր, Թեմական Պատգամաւորները եւ ծխական խորհուրդի Ատենապետը:

Յարակից ժողովներու մասնակցեցան Տիկնանց Միուլթեանց պատգամաւորները, Կիրակնօրեայ եւ Հայ Վարժարաններու ուսուցիչները եւ էյ.Սի. Ուայ.Օ.էյ.ի ատենապետները: Հոգեւորականաց Համագումարին մասնակցեցան Եկեղեցւոյս Հոգեւորականները:

Եկեղեցւոյ Տարեկան Դաշտահանդէսը տեղի ունեցաւ Սեպտեմբեր 16-ին, Մէյնարտի Ռատ էնտ Կրն Գլապի դաշտավայրին վրայ: Դաշտահանդէսին ատենապետներն էին՝ Իւժին Ռաֆայէլեան, Չարլս Նահապետեան եւ էն Հինդլեան: Դաշտահանդէսի զուտ շահն էր 4735 տոլար: Դաշտահանդէսին ներկայ էին շուրջ 3000 ծխականներ:

9.- ՏԱՐԵԿԱՆ ԺԱՇԿԵՐՈՅԹ.-

Եկեղեցւոյ օժման 18-րդ տարեդարձի ճաշկերոյթը տեղի ունեցաւ Հոկտեմբեր 14-ին, մեծ հանդիսութեամբ: Գաշկերոյթի ատենապետներն էին՝ Իւժին Ռաֆայէլեան եւ Անիթա Հետիսըն: Իսկ հանգանակութեան ատենապետներն էին՝ Ճէրըլտ Աճէմեան եւ Տքթ. Փօլ Պարսամ, որոնց նուիրեալ աշխատանքին շնորհիւ զոյացաւ շուրջ 40,000 տոլար: Գաշք պատրաստուեցաւ Երէց Տիկնանց Միութեան կողմէ: Տխար նուպար Հինդլեան պատուուեցաւ իբրեւ ՝՝Տարուան Մարդը՝՝: Այս առիթով տօնուեցաւ նաեւ Չըլսիի Տիկնանց Միութեան հիմնադրութեան յիսնամեակը:

10.- ՏԱՐԵԿԱՆ ՊԱԶԱՐ.-

Եկեղեցւոյ Տարեկան Պազարը տեղի ունեցաւ Դեկտեմբեր 1-ին, ատենապետութեամբ Անիթա Հետիսընի եւ համագործակցութեամբ եկեղեցւոյ բոլոր կազմակերպութիւններու: Գնահատելի էր տարուած աշխատանքը եւ համագործակցութեան ոգին մեր կազմակերպութիւններու միջեւ: Պազարէն զոյացաւ 21,000 տոլար: Հովիւ եւ ծխական Խորհուրդը ընդունելութեամբ մը պատուեցին պազարին աշխատողները: Կը գնահատենք Անիթա Հետիսընի եւ իր յանձնախումբի անդամները, իրենց նուիրուածութեան համար:

11.- ԿԱՂԱՆԴԻ ԺԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԵՍ.-

Ատենապետ Արա Հապէշեանի գլխաւորութեամբ եւ Հայկ Ժամկոչեանի գործակցութեամբ կազմակերպուեցաւ Կաղանդի գիշերուան ճաշկերոյթ-պարահանդէսը: Կը գնահատենք Արա Հապէշեանի եւ Հայկ Ժամկոչեանի եւ իրենց տիկիններուն նուիրուածութիւնը: Ձեռնարկը յաջողութեամբ պսակուեցաւ:

12.- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ.-

Եկեղեցւոյ Մշակութային Յանձնախումբը, ատենապետութեամբ Տանըլտ Թէլլալեանի, երրորդ տարին ըլլալով Մշակութային Ամսուան առթիւ ցուցադրեց նիւ Եորքաքնակ հնահաւաք Յարութիւն Հազարեանի հնութիւնները եւ Պոսթոնաքնակ Յուլակ Ամիրեանի հայկական դրամներու եւ դրոշմաթուղթերու հաւաքածոները: Ինչպէս նաեւ Ուաշինկթընաքնակ Յարութիւն Նալչայեանի ՝՝Հպարտ Հայերը՝՝ լուսապատկերները եւ Այվագովսքիի նկարներու ցուցադրութիւնը: Իսկ նոյեմբերին՝ ծանօթ ուսիսթ ժորժ Մկրտիչեանի համերգը:

Ա.- Բրո-Միլզիգա Յանձնախումբը ներկայացուց ծննդեան համերգ մը, Եկեղեցւոյս ``Երեւան Երգչախումբ``ի կատարմամբ եւ Հոգշ. Տ. Օշական Վրդ. Մինասեանի ղեկավարութեամբ:

Բ.- Ապրիլ 8-ին, Եկեղեցւոյս ``Երեւան Երգչախումբ``ի տարեկան համերգը տեղի ունեցաւ Պելմոնդի Հայ-Սքուլի սրահին մէջ, ղեկավարութեամբ Հոգշ. Տ. Օշական Վրդ. Մինասեանի:

Գ.- Մայիս 20-ին, թեմիս նախկին Առաջնորդ Գերշ. Տ. Տիրան Արքեպիսկոպոս ներսոյեանի քահանայական ձեռնադրութեան յիսնամեակը տօնուեցաւ, Ս.Յակոբ եւ մեր Եկեղեցիներու համագործակցութեամբ, մեր սրահին մէջ: Նոյն առաւօտ Սրբազան Հայրը պատարագեց եւ քարոզեց Եկեղեցւոյս մէջ:

Դ.- Դեկտեմբեր 9-ին, Եկեղեցւոյս Պատուակալ Հովիւ՝ Արժ. Տ. Բաբգէն Ա. Քհնյ. Մազուտեանի քահանայական ձեռնադրութեան երեսնամեակը տօնուեցաւ նոյն ձեւով: Առաւօտուն պատարագեց եւ քարոզեց Տէր Բաբգէն Հայրը եւ ապա Եկեղեցւոյս սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն մը:

Ե.- Կիրակի, Դեկտեմբեր 23-ին, տօնակատարուեցաւ ``Մանկան Միջազգային Տարին``:

14.- ԿՐԹԱԹՈՇԱԿ.-

Նախորդ տարիներու նման, այս տարի եւս Եկեղեցւոյս Ս.Սեղանի սպասարկողներէն Ռապրդո Նահապետեանը, Նորմըն Օտապաշեանը եւ Դաւիթ Փանոսեանը կրթաթոշակ ստացան մասնակցելու Ս.Ներսէս Վարժարանի ամառնային միաշաբաթեայ սարկաւազաց դասընթացքին:

15.- ՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ.-

Տարւոյս ընթացքին հետեւեալ նորոգութիւնները կատարուեցան մեր ծխատան մէջ.- ծխատունը արտաքնապէս ներկուեցաւ: Բոլորովին նորոգուեցաւ շէնքին ետեւի պատշգամբ:

16.- ԳՐԱՍԵՆԵԱԿ.-

Կը գնահատենք Արժ. Տ. Բաբգէն Ա. Քհնյ. Մազուտեանի նուիրեալ ծառայութիւնները Եկեղեցւոյս եւ համայնքիս մէջ:

Կը գնահատենք նաեւ Տիկ. Ռոզ Մէմիշեանի նուիրուածութիւնը, աշխատասիրութիւնը եւ պատրաստակամութիւնը:

Կը գնահատենք Օիթըր Առաքելեանի կամաւոր ծառայութիւնները:

Կը գնահատենք նաեւ բոլոր կամաւոր աշխատողներու ծառայութիւնները:

- Եկեղեցւոյս գրասենեակի գործածութեան համար զնուեցան հետեւեալ մեքենաները.- Անգլերէն գրամեքենայ մը, պատկերահան մեքենայ մը եւ սթէնսիլ շինող մեքենայ մը:

Այս առթիւ կ'ուզենք գնահատել Տիկ. Ալիս Նահապետեանի նուիրումը, որ մինչեւ տարւոյս կէսը տեսչի պարտականութիւնները ստանձնեց: Սեպտեմբերէն սկսեալ ժէյմս Մակարեան նշանակուեցաւ վարիչ Կիրակնօրեայ վարժարանի եւ Երիտասարդաց Կազմակերպութեան: Մեր գնահատանքը նաեւ Կիրակնօրեայ վարժարանի ուսուցչական կազմին:

18.- ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ.-

Ա.- Կազմուեցաւ Ամուրի Երկսեռ Երիտասարդաց Կազմակերպութիւնը, առնապետութեամբ Շէրըլ Պօղոսեանի եւ Ճէնիս Տօրեանի:

Բ.- Շաբաթական Աստուածաշունչի Սեմինար, ժէյմս Մակարեանի առաջնորդութեամբ:

Գ.- Աստուածաշունչի սերտողութիւն, Կրէկ Թաշմեանի առաջնորդութեամբ:

Դ.- Երէջներու Քրիստոնէական Դաստիարակութեան Պահ Կիրակի առաւօտները, ղեկավարութեամբ Գիւր դասախօսներու:

19.- ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ՏՐԱՏՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ.-

1979-ի տարեշրջանին եկեղեցւոյս տրատու անդամներու թիւն է 640:

20.- ԽՈՂԵՐ ԺԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՏԵՆԱՊԵՏԷՆ.-

Եկեղեցւոյս Հոգեւոր Հայրերու գլխաւորութեամբ եւ եկեղեցապատկան կազմակերպութիւններու ու ծխականներու համագործակցութեամբ 1979 թուականը յաջողութիւններու տարի մը եղաւ, թէ հոգեւոր տեսակէտէ եւ թէ ընկերային ու նիւթական տեսակէտէ: Վերոգրեալ տեղեկութիւնները ինքնին արդէն խօսուէն փաստն են մեր յաջողութիւններու:

ՄԱՄԱՐԷ ԲՀՆՅ. ԳՈՒԶՈՒԵԱՆ
Հոգեւոր Հովիւ եւ նախագահ
Ծխական Խորհուրդի

ԱՆԻԹԱ ՀԵՏԻՍԸՆ
Ատենադպրուհի
Ծխական Խորհուրդի

ՀԵԼԻՅՆ ՏՕՐԵԱՆ
Ատենապետուհի
Ծխական Խորհուրդի

PARISH COUNCIL REPORT
1979

-4a-

PARISH COUNCIL ACTIVITIES

1979 was an outstanding year in religious, educational, cultural and social programs under the direction and guidance of Reverend Father Mampre Kouzouian.

New programs will be coming out in 1980. There will be something of interest to everyone.

NAMES OF NEWLY ELECTED PARISH COUNCIL MEMBERS

John Bichajian, Jr.	Arthur Maranian Sr.
George Der Hagopian	Eugene Raphaelian
Helene Dorian	Aetna Tashjian

Rose Minassian, alternate, fulfilled the remaining term of Arthur Maranian, Sr.

COMPLETE LIST OF PARISH COUNCIL MEMBERS

Reverend Father Mampre A. Kouzouian, President
Helene A. Dorian, Chairman
Donald J. Tellalian, Vice-Chairman
George D. Hagopian, Treasurer
Anita Hedison, Secretary
Joseph Haroutunian, Assistant Treasurer
Charles Nahabedian, Assistant Secretary
Dr. Paul C. Barsam, Advisor
John Bichajian Jr. "
Rose Minassian "
Eugene Raphaelian "
Aetna Tashjian "

CLERGYMEN AND LAYMEN ON OUR STIPENDS AND PAYROLL

Reverend Father Mampre A. Kouzouian, Pastor
Reverend Father Papken Maksoudian, Pastor Emeritus
Very Reverend Father Oshagan Minassian, Choir Director
Mrs. Rose Mamishian, Secretary
Mrs. Helen Mouradjian, Organist
Levon Terzian, Deacon
James Magarian, Church School Superintendent, Youth Director
Joseph Ashjian, Custodian
John Cicolla, Assistant Custodian
Joseph Katola, Custodian

AUXILIARY ORGANIZATIONS OF OUR CHURCH

Senior Women's Guild	Church School
Women's Guild	Armenian School
Chelsea Women's Auxiliary	Lynn-Salem-Peabody Women's Auxiliary
Trinity Men's Union	A.C.Y.O.A. Seniors
Choir	A.C.Y.O.A. Juniors
Erevan Choral Society	Trinity Couples Organization

DIOCESAN DELEGATES

John Davagian Archie Kolligian Peter Talanian
A. Richard Goolkasian John Soursourian Diran Zahigian

FELLOWSHIP HOUR

The gathering of parishioners following Sunday's Church Services has become one of the most active meeting places in our Church.
Each month, a different Church organization serves as host.

PARISH COUNCIL MEETINGS

In addition to the varied special meetings, all bi-monthly meetings are held in the Parish House. A joint dinner-meeting with St. James was held at the Cottage Crest Restaurant on May 31, 1979. Subjects of mutual interest were discussed.

76TH ANNUAL DIOCESAN ASSEMBLY

The 1979 Assembly was held in Chelmsford, Massachusetts, hosted by Sts. Vartanantz Armenian Church (See Diocesan Assembly Report)

ANNUAL CHURCH PICNIC: September 16th

Over 3000 people enjoyed the new and vast picnic grounds at the Rod & Gund Club in Maynard. By popular request, the picnic will take place at the same site next September 14, 1980.

Co-Chairmen: Eugene Raphaelian & Charles Nahabedian with Mrs. Ann Hintlian.

ANNUAL GIVING BANQUET

Co-Chairman: Eugene Raphaelian & Anita Hedison
Fund-Raising: Gerald Ajemian & Dr. Paul Barsam
Luncheon: Senior Women's Guild

Annual Pledge Drive reached \$40,000 through the generosity of our parishioners and organizations.

--- Mr. Nubar Hintlian, recipient to the 2nd annual "Man of The Year" award.

--- Celebration: 50th Anniversary, Chelsea Women's Auxiliary

CHRISTMAS BAZAAR

Chairman: Anita Hedison
Committee: Church Organizations
This year's Bazaar realized \$21,000.00 - Gigantic Success.

NEW YEAR'S EVE DINNER-DANCE: 2ND ANNUAL

Chairman: Ira Habeshian
Early sell-out for this popular affair - A perfect evening for all.

CULTURAL PROGRAMS

We've enjoyed three years of programs with true professionalism as administered by Father Mampre, Chairman, Donald Tellalian and committee.

The depth and magnetism of these programs have spread throughout the entire community.

SPECIAL EVENTS

- PRO-MUSICA - under the direction of the Very Reverend Oshagan Minassian and the Erevan Choral Society.
- CHRISTMAS CONCERT, 600 guests: December 16th
- FAMILY THANKSGIVING DAY: November 18th
- CELEBRATION: Reverend Father Papken Maksoudian's 30th Anniversary in the Ordination of the Priesthood; December 9th.
- INTERNATIONAL YEAR OF THE CHILD DAY: December 23rd.

SCHOLARSHIPS

Scholarships to the St. Nerses Deacon's Training Program were awarded to Norman Odabashian, Robert Nahabedian and David Panosian.

RENOVATIONS

New face: exterior of Parish House.
Office typewriter, copy machine, stencil maker

SUNDAY CHURCH: PARISHIONER-PARTICIPATION

Bi-monthly: Four representatives from each organization have been serving on Sundays by greeting and ushering parishioners, taking Voghchooyn, and partaking in the plate offering. This program has now become an integral part of our Sunday Services.

NEW HAPPENINGS IN 1979

- YOUNG ADULTS GROUP: A new organization - Young adults are invited to join.
Co-Chairmen: Cheryl Bogosian and Janice Dorian.
- BIBLE SEMINAR: Weekly - James Magarian-Church School Superintendent
- BIBLE STUDY AND CHRISTIAN GROWTH: Weekly - Chairman-Gregory Tashjian
- ADULT CHRISTIAN EDUCATION: Sunday mornings with guest speakers

CHURCH MEMBERSHIP - 640

PARISH COUNCIL CHAIRMAN'S COMMENTS

The untiring support of our Clergy, organizations, and parishioners have made Holy Trinity: 1979 a most memorable year both socially and financially. The above statistics are self-explanatory as to the end results of a successful year..

